

լըիւ ասած լինելու համար յայտնենք, որ այդ գործողութեան մէջ Աւետ Աւետիչի երկու աղջիկները—Մանեան—16 տարեկան և Օլեան—15 տարեկան—վիճում են իրար հետ, թէ իրանցից որք վրայ է սիրահարուած այն ինչ աշակերտը, և տեղնուտեղն ստուգելու նպատակով հարցնում են հէնց այդ աշակերտից, ու բանից դուրս է գալիս, որ երկուան էլ դժգոհ լինելու առիթ չունեն...

Հինգերորդ գործողութեան մէջ Աւետ Աւետիչի կինն ամուսնուն թողնում՝ փախչում է, մեզ միանգամայն անտեղեակ թողնելով իր այդ քայլի շարժառիթից, դրդումից... Աւետ Աւետիչի աղջիկն էլ միւս կողմից է դուրս գալիս և գանգաւում հօրը, թէ ինքը կորած է. ընկերներն էլ միւս կողմից են գալիս՝ Աւետ Աւետիչից իրանց փողը պահանջում (?), որովհետև իրանց գործը ցանկալի արդիւնքը չէր տուել... այդպէս՝ ընկերներից մինը պարտաւորուած է հատուցանել ամենքին իրանց վնասը՝ չգիտենք՝ սր անւտրական օրէնքի հիման վրայ: Կեանքն այդպէս չէ, այդքան էլ միամիտ ձևով շարժում թալան՝ չէ կատարուում վաճառային աշխարհում, այն էլ «փորձուած» վաճառականների մէջ. այդպիսի բան ուրիշ շրջաններում, խեղճերի աշխարհում միայն կարող է տեղի ունենալ...

Իսկ գրուածքի լեզուն... կատարեալ բարեխոսան խառնակութիւն!

Թիֆլիզի բարբառն աղաւաղուած է սոսկալի կերպով: Կէտադրութիւնն... անտանելի է:

Աւելորդ կը լինէր պարոն «հեղինակ»-ին որևէ խորհուրդ տալը, եթէ միայն նա չվախեցնէր ընթերցողներին. յուսանք, որ պարոնը կը կարողանայ այնքան համեստութիւն ունենալ, որ չի իրագործիլ իր սպառնալիքը—«շուտով լոյս կը տեսնի «Հացի խնդիր» դրամա 1 գործ. 4 պատկերով», և այդ դրաման էլ իր այս արդէն «լոյս տեսած» «Կորածներ» «պիէսի» և դրանց գրելու վրայ կորցրած ժամանակի հետ միասին կը համարէ «կորած» հայ գրականութեան համար և կը բաւականանայ այդ բնուով:

ԱՐՇ. ԱԹԱ.

Մ. Գորկիյ՝ «Մակար Չուդրա», թարգմ. Ս. Բարիեան, Ցիֆլիզ, 1903, գ. 10 կ.:

«Մակար Չուդրա»-ն այնպիսի գեղարուեստական գըրուածքներից է, որոնց արժանիքը երևան հանելու համար անհրաժեշտ է շատ գեղեցիկ թարգմանել, այլապէս նրանք կը

կորցնեն իրանց գեղարուեստականութիւնը: Սակայն Գոր'կիյի գրչի այդ բանաստեղծական արտադրութիւնը ոչ միայն գեղեցիկ չէ թարգմանուել, այլ ուղղակի մի անորմալ գանգի անմիտ. ցնդարանութեան տպաւորութիւն է թողնում: Հետեւեալ ցիտատաները բաւական են, որպէսզի ապացուցանեն մեր ասածը.—

„Такъ ты ходишь? Это хорошо! Ты славную долю выбралъ себѣ, соколъ. Такъ и надо: ходи и смотри; насмотрился, лягъ и умирай—вотъ и все!“

«Ուրեմն դու գնո՞ւմ ես: Այդ լաւ է: Դու լաւ բաժին ես ընտրել քեզ համար, բարեկամ. այդպէս էլ պէտք է. գնա և նայիր. կշտացար նայելուց, պառկիր ու մեռիր—այդ է բոլորը» (եր. 4):

Ինչպէս տեսնում էք, բառերը ճիշտ են թարգմանուած, ըրաց միթէ՞ այդ հայերէն է. որ հայը կարող է հասկանալ. երևակայեցէք, որ Չուդրան ուզում է ասել, թէ կեանքն ազատ թափառելու, աշխարհ տեսնելու մէջ է. միթէ՞ վերը բերած հատուածն այդպէս է հասկացւում:

„Ты и не знаешь такихъ краевъ, гдѣ я бывалъ. Такъ нужно жить: иди, иди—и все тутъ.“

«Դու չգիտես էլ այնպիսի տեղեր, ուր ես եղել եմ: Այնպէս պէտք է ապրել. գնա, գնա,—ահա այդ է բոլորը» (եր. 6):

„А онъ себѣ жилъ, и ужъ коли ему понравился конь...“

«Իսկ նա ապրում էր իր համար, և եթէ արդէն նրան դուր քար մի ձի...» (եր. 9):

„А я съ Кошутомъ воевалъ“ (այսինքն՝ կոշուտի դէմ եմ կռուել):

«Իսկ ես Կօշուտի հետ միասին եմ կռուել» (եր. 12):

„А она все (բանի գնում՝ այնքան) ближе—իսկ նա միշտ մտնում էր. изъ темноты вырѣзался—մթութեան միջից պարզ երևաց. усы легли на плечи—բիւերն իջել են ուսերի վրայ. стоитъ весь... въ огнѣ костра“ (այսինքն՝ ողջ հասկովը մէկ կանգնած է խարոյկի լուսում)—Կանգնած է ողջ, խարոյկի կրակում (այդպէս հօ խեղճը կ'այրուի):

«Անիծուած լինեմ ես, եթէ չէի սիրում նրան արդէն ինչպէս ինձ աւելի առաջ, քան նա ինձ մի խօսք սասաց կամ պարզապէս նկատեց, որ ես էլ նոյնպէս ապրում եմ աշխարհիս երեսին»:

Հերիք է այսքանն էլ վերջ չունի. սա նշանակում է՝ հայերէն բառերով գրել ոսերէն և ցոյց է տալիս, թէ թարգմանիչը ոչ միայն կարգին հայերէն չգիտէ, այլև նա չէ ըմբռնում ոռւսական ոճաբանութեան ոգին, նրան մանաւանդ միանգամայն անծանօթ է ոռւս ժողովրդի լեզուն:

ԱՐՇ. ԱԹԱ.

### ԻՄ ՊԱՏԱՍԻԱՆԸ Պ. Լ. ԻՆ

«Մուրճ»-ի մայիսի գրքոյկում տպուեց իմ թռուցիկ մատենախօսական ակնարկը Գրիգոր Արծրունու աշխատութիւնների առաջին հատորի մասին, ուրիշ խօսքով Արծրունու այն յօդուածների մասին, որ նա գրել էր «Մշակ»-ի հրատարակութիւնից առաջ, մեծ մասամբ՝ ուսանող ժամանակը:

Պ. Լ. հարկաւոր համարեց քննադատել այդ թռուցիկ ակնարկը «Մշակ»-ի երեք բանասիրական բռնող յօդուածով («Մուրճի քննադատին» — №№ 116, 117 և 119):

Ես կը պատասխանեմ այդ յօդուածի միմիայն էական կէտերին:

Ես գրել էի ի միջի այլոց հետեւալը. «Իր սկզբնական յօդուածներում Գրիգոր Արծրունին ցոյց է տալիս նաև իր անտեղեակութիւնը հայոց պատմութիւնից»:

Իբրև փաստ բերել էի հետեւալ հանգամանքը.

Սօսելով մի Ֆրանսիացի հեղինակի մասին, որի կարծիքով հայերը մինչև տասնիններորդ դարը այբուբեն չունէին, Արծրունիս գրում էր 1870 թուին. «Ուրեմն հեղինակը չգիտէ, թէ մեր այժմեան օրագիրներում գործածուած գրերը նոյն են, որոնք IV դարում մեր Գրիգոր Լուսաւորիչն էր գործածում իր աստուածաբանական գրուածքներում: Զարմացած կարդացի՞նք գրքի մէջ, թէ հեղինակը Կ. Պօլսի մէջ է ապրում...»

Բերելով Արծրունու յօդուածի այդ սողերը՝ ես աւելացրել էի. «Նոյնքան, գուցէ և աւելի զարմանալի էր, իհարկէ, այն, որ Գրիգոր Արծրունին, հայ լինելով, չգիտէր, որ «այժմեան օրագիրներում գործածուող գրերի» գիտող եղել է Գրիգոր Լուսաւորչից շատ յետոյ»:

Այդ առիթով պ. Լ. բացազանչում է. «Մենք էլ, ճիշտն